ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 416 – Ա

09 օգոստոսի 2021 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 17-րդ ու 19-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2021 թվականի օգոստոսի 6-ի N 1259 գրությունը՝

որոշում եմ՝

1.Գեղարքունիքի մարզի անտառային և բուսածածկ տարածքներում հրդեհների առաջացման ու տարածման վտանգի կանխարգելման, դրանց հետևանքով բնակչությանն ու բնությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Նավոյան Ռուբիկ	-Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար
Հակոբյան Գարեգին	-Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ |համաձայնությամբ|
Պետրոսյան Մարտին	-մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Օհանյան Հրանդիկ	-մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ
Զանգեզուրյան Դավիթ	-մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Մնացականյան Կարեն	-«Սևան» ԱՊ» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրեն |համաձայնությամբ|
Կիրակոսյան Վազգեն	-ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի տեղակալ |համաձայնությամբ|

Հովհաննիսյան Իրինա -«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն |համաձայնությամբ|

Մարտիրոսյան Ավետիք -ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի տեղակալ

2. Աշխատանքային խմբին՝ կատարված աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Գեղարքունիքի մարզպետին:

09.08.2021

X

ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: MANUKYAN NAREK 2203890517

Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ք. Գավառ